

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

1867 թուին Օգոստոսի 12 - ին Ղերապոս Բերտան ուսումնարանի պարգևարաշխութեան ժամանակ տատաճ հար:

Արեւիկի որդիքս:

Զեղ առա՛ծ կ'լինին, որ ես մի երեւելի ճարտարախօս եմ, ես ինձ չեմ կարծում երեւելի և ես ճարտարախօս չեմ, բայց սովորութիւն ունիմ խօսակցելու երբեմն տղայոց հետ և, եթէ թոյլ տաք, այժմ ես ձեզ հետ կ'խօսակցիմ:

Սէն. Արու՛մ, մեր ուսումնարանին զրացի մի ուսումնարան, որ նոյնպէս մեր նահանգի պառլամէն է, ամեն տարի դալիս է մի զօրապետ մի ծեր զինուոր քննելու տարուայ մէջ եղածը, նա տալիս է զովստանք և յանդիմանութիւն, այս գաղափարներից յետոյ աւելացնումէ խրատներ, խրաքանդիւրը նորան լսումէ մեծարանքով, սորա պատճառը շատ պարզ է, այն է, որ իւր տուած խրատները իրեան փորձած ճշմարտութիւններն են: Օրինակի համար, երբ նա սովորեցումէ թէ ինչպէս պէտքէ միմեանցից բաժանուիլ թշնամու զընտակը շընդունելու համար, կարողանում է երբեմն կտարուած թմեր ցոյց տալով տակ. «Այսպէս արեք, եթէ ոչ դուք ինձ պէս կ'լինիր»:

Դուք նոյնպէս, սիրելի որդիքս, մի զինուորական զպրոց էք, դուք մի մեծ բանակի նորաժողով զօրքերն էք, աշխատութեան և ճարտարութեան բանակի, մի բանակի, որը փառք Աստուծոյ, ստիպուած չէ մարդ սպանելու, և որը ընդհանրապէս աշխատում է հնարաւոր եղածին չափ մարդիկների ամենամեծ բազմութիւն ապրեցնելու լատիզոյն պայմանով, ես ևս մի ծեր զինուորի նման դալիս եմ այստեղ, ես ևս շատ անգամ պատերազմներ վարած եմ, ես ևս շատ անգամ վիրաւորված եմ, և երբոր ձեզ խօսում եմ, դուք վառահամալով իմ վերայ ինքն իրենդ կարող էք տակ. «Նա այն փորձերից անցած է, որոնցից մենք պիտի անցնենք»:

Աս պէտք է սկսէի զովստանք կամ յանդիմանութիւն անելու, բայց ես քիչ շփոթուած եմ, ես յանդիմանելու բան չունիմ: Պ. Բերտանը զօրծերը կատարելու այնպիսի մի եղանակ ունի, որ բաւական զօնարացընում է նոցա մասին քննութիւն անելը, նա ինձ ներկայացրեց ընտրելիների ցուցակը, որոնց նա հինգ տարուց ի վեր ընդունել էր տալիս զանազան մրցմունքի միջոցին, նա ներկայացրեց քառասուն երկու ընտրելի և ձեռք բերեց քառասուն երկու ընտրուած, ի՞նչ պէտք է տակ սորան. Գննութիւնը ձգելը հետեւալ տարուան և կամ աւելի ուշ:

Այսօր, եթէ թոյլ կտաք, ես ձեզ պիտի խօսիմ դաստիարակութեան մասին: Աս լաւ գիտեմ ինչ պիտի տեկնի, եթէ համարձակվին, այս գրա-

սեղանների վերայից, ուր ես տեսնում եմ փոքր զուխների մի բաղմուն-
 թիւն: «Դաստիարակութիւն» բայց պարտն մենք այժմ արձակուրդ մտա-
 ծենք, և թէ ամբողջ տարին միայն այդ բանի մասին խօսած են: Սակայն
 շատ բաներ կան այս նիւթի վերայ խօսելու: որդիքս, շատ բաներ, որոնք
 մասնաւորապէս ձեզ են վերաբերուում են ձեր արձակուրդ մտած ժամա-
 նակ և թէ, որովհետեւ դուք բոլորովին ազատ չէք, մենք սահմանի վե-
 րայ ենք, թող տուէք ինձ այս հարցի վերայ խօսելու: այնպէս ծանրու-
 թեամբ որպէս թէ դաստարանում լինէիք, և այնպէս ուրախ, որպէս թէ
 արձակուրդում լինէիք:

Եթէ ես ձեզ հարցնեի, թէ ինչ է հասկացուում դաստիարակութիւն
 ասելով, դուք ինձ պիտի պատասխանէիք, դաստիարակութիւնը այն է ինչ
 որ Պանսիօնում սովորում են: Ընաջին հայեցումներում սահմանը մտտ չէ,
 բայց անկասարէ: Միայն Պանսիօնում չէ որ մարդ սովորում է, ինքն
 ըստ ինքեան մարդ սովորում է ամենայն տեղ և սովորում է ամենայն
 ինչ: Եթէ դուք փոքր քոյր կամ մի եղբայր ունիք, դուք կարող էք տես-
 նել, որ նոցա խօսել, ուտել և նոյն իսկ երբեմն քնանալ են սովորեց-
 նում: երբ նոքա չեն կամենում քնանալ, նոյն իսկ դուք ևս երբ արձա-
 կուրդ կամուէք, պիտի զարմանաք, տեսնելով որ չէք կարողանում անել
 շատ հեշտ բաներ, երբ ցանկանում էք, և այս պատճառ ունի որովհետեւ
 ձեզ այդ բաները չեն սովորեցուցած: Տախտակին մի անգամ զարնելուց ա-
 ելի դիւրին ի՞նչ բան կայ: Փորձեցէք, հասանական է որ ձեր մէջը շա-
 տերը կան, որոնք ոչ միայն մատերին պիտի զարնեն, այս կոսի յաջո-
 դութիւն է, այլ և մի հատ զամ զարնելու: չյաջողած երեք շաբա հատ
 պիտի կոտրեն: Ամա թէ, եթէ ձեզ մէկը մի սրոց տայ, դուք բոլորովին
 պիտի զարմանաք տեսնելով որ փշաքնում էք դործիքը, մինչդեռ առաջդ
 դուրս եկող երեսագործի մի աշակերտ կարում է ամենախառն նկարները:
 Սակայն մի գամ զարնելուց և մի կտոր մոյշտ սղոցելուց աւելի հեշտ ոչ-
 ինչ չկայ: Ըստպէս և մեացածները դաստիարակութեան դործն է:

Եթէ ամենայն ինչ դաստիարակութիւն է մարդ այնպիսի մի հետեանքի
 կհասնի, որի մասին մարդիկներից շատերը մտածած չեն, ես կամենում եմ
 խօսել նոցա մասին, որոնք վախենում են դաստիարակութիւնից և որոնք
 կրկնում են այնքան ուրիշներից վերջը, որ մանուկ երբ կրթել երբեմն
 վատնգաւոր է: Մեր ուղեգր, մեր հոգին միշտ մի որ և իցէ բանով լի է
 և եթէ մենք այնտեղ ճշմարտութիւն չզննեք, մոլութիւնը կամեն և ա-
 ռաքնութեան տեղը կբռնէ: Եթէ մենք լաւ դաստիարակուած չենք, նո-
 բանից ամենեւին չհեռանա, որ մենք անմեղ և անմեղա միջոցի մէջ ենք,
 մենք պարզաբար մտա դաստիարակուած ենք: Ընտրութիւնը դաստիարա-
 կութիւն լինելուն չլինելուն մէջը չէ, այլ և մտա դաստիարակութեան
 մէջ: Երեկ ես կարդում էի օրագրի մէջ որ Սիկիլիայում քոլերա է երե-
 ում: Ի՞նչ է անում Սիկիլիայի ժողովուրդը այդ պատժի ժամանակ: Սա
 ոչինչ չէ խմանում, նա շատ տղեւ է, այս մի ճշմարտութիւն է, որ ոչ որ

չէ կարող մերժել, նա մտածումէ որ կամենում են իրան միանգամայն թունաւորել, թէ մի գծուած յատկագիծ կայ նորան ոչնչացնելու, և բոլոր այս մարդիկները իւրեանց տան մէջ փակելու և մի թշուառ մահաւան գոտադարեւու: Ինչո՞ք ըստ անհոգիութեան 1832 թուին Հոգեւորական և նոյն իսկ Փարիզի մի քանի փողոցներում: Այսօր ընդհանրապէս, եթէ այս հիւանդութիւնը Փրանսիայում երեւի, զիտեն թէ ինչպէս պէտք է նորահետ վարուել, չեն մտածեր որ այնպիսի ամբարիշտ մարդիկներ կան որոնք կամենում են մի ամբողջ ժողովուրդ թունաւորել: Փոխանակ այդ պատիժով քարոզելու, զիտեն նորահետ պատերազմել գործունէութեան և զգուշութեան միջոցով: Երկու երկիրներէ մէջ զանազանութիւնը այս է որ, մէկի մէջ զաստիարակութիւն կայ և ապրում են, մինչդեռ միւսի մէջ ազիտութիւն կայ և մեռնում են:

Բայց պիտի տեսնուի եթէ այդպէս է, պէտք է որեւէ մարդ կեանքը սովորելով անցկացնել: Այս ամբողջ կեանքը մի զաստիարակութիւն է: Պատճառը յայտնի է: Որովհետեւ ամբողջ կեանքը մի զարգացում է: Երբ երբեք վաղը ճշմարտապէս այն չենք, ինչ որ էինք երեւի, մենք նոր պարտքեր ունինք կատարելու, նոր կարիքներ լեցնելու, մենք կեանքի մի ուրիշ տարիքի մէջն ենք, որեւէ մենք մի ուրիշ զաստիարակութեան պէտք ունինք:

Դաստիարակութեանը որեւէ ի՞նչ սահման պիտի տանք: Դաստիարակութիւնը մեզ համար այն զիտութիւնը պիտի լինի, որի առարկայն մարդի ֆիզիքական, մտաւորական և բարոյական զարգացումն է: Երբ մի մարմին ունի նա մի հոգի և մի սիրտ ունի, որոնք ապրում են, այսինքն անդադար զարգանում են, և որպէս զի մարդ առողջ և երջանիկ լինի, պէտք է որ բոլոր իւր դժերը, իւր բոլոր կարողութիւնները, զարգանան և ներդաշնակաւոր կերպով ծաղկեն: Այդպէս, եթէ զարգացումը մասնաւորապէս անկանոն և անկարգ լինի, մարդս մարդ չէ, այլ ճիւղալ է:

Օրինակի համար, երբեմն գտնուում են, ես չեմ ասում պանդխտութեան այլ զրտում, մի մեծ և կոպիտ տղայ, վաղեմամբայ խոսվարար, խեղճ միշտ պատրաստ մի արացի, կամ մի բռունց տալու, այլ և ապէտ, շինական, կտական, նորահետ համար ասում են «յիմար է, իւր միտքը բացուած չէ, իւր սիրտը մեռած է»:

Ուրիշ տղայք ևս կան, ընդհանրապէս, մտացի և աշխատասեր են, բայց նորահետ աշխատելով գտնում են հիւանդոտ և խեղճ, ընկերի հետ չվարուող հպարտ կամ նախանձոտ: Առաջ համար զո՞ք ասումք, «նորահետ փոքրիկ պարծուկներ են»: Աւերջապէս ուրիշ տղայք բարի են, նորահետ պատրաստ են իւրեանց ընկերներին բարիք անելու, բայց ոչինչ չեն իմանում, մի խօսքով խաբոււած են: Նորահետ աշխարհի ամենալեղեցիկ զիտաւորութիւնները ունին, բայց ազիտութեամբ, բարի կարծելով շարութիւն են անում:

Այսպէս ինչպէս զո՞ք տեսնումք, բոլոր ֆիզիքական, մտաւորական և

բարոյական յաւկու թիւնների մի կատարեալ և ներդաշնակաւ որ զարգացումն պէտք է։ Նորա մասին այսպէս մտածած են բոլոր ժամանակների հանճարեղ մարդիկները։ որոնք որ դաստիարակութեամբ պարապած են։ Բայց միայն մեր օրերումն է որ մարդ ինքն իւրեան հարց է առաջարկած։ թէ ինչպէս պէտք էր վարուիլ ամենաբազմաթիւ գէպքերում։ այս կատարեալ զարգացման հասնելու համար։ մինչև այն ժամանակ այնպէս դաստիարակութիւն էին անում ինչպէս պառուները բժշկութիւն։ տարակուսաբով։ գէպքին համեմատ վարուելով։ Այսօր դաստիարակութեան մասին այն մտքին են հասած։ որը դաստիարակութիւնը ճշմարիտ գիտութիւն է համարվում։ և այս միտքը այս է։ որ աշխարհի մէջ ամենայն ինչ՝ կատարում է Աստուծու կողմից հաստատուած օրէնքներին հետեւելով։ Այդ օրէնքները ճանաչել և պահպանել։ այս է լաւ կանոնաւորուած և նոյն իսկ սորանով երջանիկ մի կեանքի բոլոր դաղանիքը։ Ահա ասիկ այն որը բոլոր դաստիարակութիւնից դուրս է բերում։ ոչ միայն բարոյական այլ և կրօնական մի գործ։ Դաստիարակութիւնն ուրիշ բան չէ։ եթէ ոչ Աստուծու կամքը մեծարել և նորան ի գործ դնել այնպէս ինչպէս որ նա մեզ բնութեան մէջ դրուած օրէնքներով յայտնած է։ և թէ բնութիւնը յառաջ է գնում մի մշտակայ կանոնաւորութեամբ։

Օրինակի համար մենք ամէնքս գիտենք որ կրակը այրում է։ Ահա ասիկ մի բնական օրէնք։ Մենք այդ օրէնքը յարգումենք մեղ կրակի մէջ չձեւելով։ Նայնպէս մենք գիտենք։ միայն մի քիչ աւելի ուշադրութիւն պէտք է։ որ մի մարդ եթէ խմում է մի շիշ օղի՝ մեծ վտանդի մէջ է ընկնում։ կամուածի հարուածից թռնուելով։ և մենք խուսափում ենք այսպիսի մի վայրենական և յաճախ մահ պատճառող շափաղանցութիւնից։

Մենք գիտենք նոյնպէս որ՝ մի մարդ։ որ ոչ դիմ չէ սիրում։ բոլոր մարդիկներից արհամարհուած է։ և թէ ետականութիւնը անհատների և հասարակութիւնների համար կորստական բան է։ Ուրիշների ետականութիւնը մեզ զրուելի է։ Ահա ասիկ մի բարոյական օրէնք։ ևս որ մենք նկատած ենք։

Այս բոլոր օրէնքների միացումից և պահպանութիւնից մի գիտութիւն է դուրս եկած։ որ մեր ժամանակի գործերից ամենաշանաւորներից մինն է։ այս դաստիարակութեան գիտութիւնն է։ Ուստի մնասիրենք նորան մանրամասնաբար։ մենք պիտի տեսնենք։ որ ինչպիսի յառաջադիմութիւններ աւրած է մարդ այս նոր և բերրի շաւղի մէջ մանելուց ի վեր։

Մենք բոլորս գիտենք որ մեզ պէտք է մի որոշեալ օղի քանակութիւն։ շնչելու համար։ Եթէ մէկը այս զահլիճի դոները և պատուհանները բոլորովին փակէ։ հաւանական է որ վաղը առաւօտ մենք բոլորս մեռած պիտի լինէինք։

Շատ ժամանակների ընթացքում։ այս բնական օրէնքի մասին մարդս անհանգիստ եղած չէ։ և ինչպէս երիտասարդութեան դաստիարակութեան նուիրված տեղերում։ նոյնպէս զօրանոցներում։ ինչպէս հարուստների

ընակարաններում: Նոյնպէս և աղքատի սենեակում, չէին մտածում մասկոտարանելու անհրաժեշտ ուղի չափը: Այսօր, այս մի զլխաւոր հարց է: Խրեմի պատերազմի ժամանակ տեսնուած է մի հանճարեղ և անձնուէր կին Միս Նիգտէն Գալ անուեով (Miss Nightingale) որը շատ հիւանդութիւնների դէմ իրրե դեղ գործ էր անում մեծ քանակութեամբ ուղը, և թէ վերջերս առողջացնելու համար նորանից ամենալաւ հետեանք էր ստանում:

Ջուրը նոյնպէս մեր առողջութեան մի տարրն է: Բայց մեք նորա գործածութեան մէջ գտնուող բոլոր առողջարար բաները հասկանալուց շատ հեռի ենք: Գիտենք որ Հոսպիտալիցիները մեծ ջրմուղներ շինու մէին ամենահեռաւոր տեղերից ջուր բերելու համար, գիտենք որ իւրաքանչիւր Հոսպիտալիցին ամենայն օր լողանումէր: Այս մեզ համար լաւ է հին պատմութիւնից: Այս հին պատմութիւնից է, քիչ վերջը, յայտուելով որ, նոր պատմութեան մէջ ևս պիտի մտնէ: Ամերիկայում մեծ քաղաքներում, և մանաւանդ Փիլադելփիայում տուն չէ գտնուում, որը տաք և պաղ ջուր չունենայ: մի քիչ գոհ վիճակ ունեցող քիչ գործատուներ կան, որոնք իւրեանց լողարանը իւրեանց հետ ունենալու միջոցը չունենան և չլուացուն իւրաքանչիւր օր, և այս լուացուիլը կարժէ երեք կամ չորս սու:

Ահաւասիկ առողջութեան մի տարր, որը այժմեանից մտած է ամերիկական կեանքի սովորութիւնների մէջ, ևս չեմ կասկածում որ շատ տարիներ շանցած Փրանսիան այդ դասը շառնէ և Միացեալ Նահանգների տուած օրինակին չհետևի:

Մի և նոյն է մարմնամարզութեան մասին ևս: Ես նորան իւր սկզբնաւորութեան ժամանակը տեսել եմ: Ես յիշում եմ այն ժամանակը, երբ մի օտարական Սպանիացի Ամօրուս գնդապետը եկաւ Փրանսիա մարմնամարզութիւնը տարածելու: Նորա վերայ նայում էին ինչպէս մի կեանքին անհրաժեշտ շեղող բաներին հետևող մարդի վերայ, որը Յոյների նորոգուած մի կեղծ կարծիքին էր հետևում: Այսօր մարմնամարզութիւնը, մարդկային մարմնու խելացի և մտածուած կրթութիւնը ու ժողովրդական առողջութեան տարիւրից մինն է: Ահաւասիկ ֆիզիքական օրէնքներ որոնք, դաստիարակութեան մասն են կազմում:

Մտաւորական օրէնքների համար ևս մի և նոյն է:

Հին ժամանակները փոխանակ ֆիզիքական օրէնքները ուսումնասիրելու փորձ էին անում: Ընութիւնը երեւակայական ենթադրութիւններով բացատրելու: Մօտաւորապէս այնպէս էին դատում: Ինչպէս Զինացիները լուսնի կամ արեգակի խաւարումն տեսած ժամանակները դատում են: Դուք գիտէք որ, Զինացիները այնպէս են համոզուած, որպէս թէ մի վիշապ կուլէ տալիս արեգակը, և այն ժամանակ, ծննդանների և թմբակների օգնութեամբ մի գոթական աղաղակ են բարձրացնում: մինչև որ զարհուրեցնեն և բռնադատեն վիշապին իւր որսը ձգելու: Դուք հասկանումեք որ, քիչ կամ երկար ժամանակի միջոցում նոքա միշտ վտահ են յաջողելու, երբ խաւարումն անցնում է արեգակը վերջապէս գուրս է գալիս վիշապի կոկորդից:

Մի և նոյն էր միջին դարերի ընթացքում, չէին նկատում այլ հնարում էին։ Ոմանք յաւիտենական շարժումն էին փնտռում։ միւսները փիլիսոփական քարի ետեւից էին ինկնում։ Երեւելի ընտանիքից մի երեխայ չէր ծնուում որի մասին գուշակութիւն անել չտային իմանալու թէ արդեօք Արէսի, թէ Աստղիկի և կամ թէ Հերմէսի ազդեցութեան տա՛կ ծնուած է և թէ երջանի՞կ պիտի լինի նա իւր կեանքում։ թէ դժբաղտ։

Այս բանը ինձ յիշեցնումէ մի Անկլիացի դատաւորի առաջը տարուած գողի պատմութիւնը։ գողը ասումէր դատաւորին. «Միջօր, ի՞նչ կամենում էք որ անեմ, իմ աստղս ինձ գուշակած էր, որ ես գող պիտի լինիմ, աստղերին հաւատո՞ւմ եք, Միջօր»։

—Անշուշտ, բարեկամ, պատասխանեց դատաւորը, որ իեւացի մարդ էր, բայց դուք ինձ ասում էք միայն ձեր մասին եղած գուշակութեան կէսը, նոյնպէս գուշակուած է, որ դուք պիտի կախուէիք, և դուք ճակատագրին համեմատ պիտի կախուիք։

Այսօր ամենայն ինչ փոխուած է. բնութիւնը ուսումնասիրում են նոյն իսկ բնութեամբ, նորա համար օրէնքներ դնելու փոխանակ նորան խոհ-հուրդ են հարցնում, և հասկացած են որ նորան նուաճելու միայնակ ձևը այս է։ Բնութիւնը բռնադատեց՝ ք, նա ձեզ կսպնէ, հնազանդեցէք նորան, նա ձեր ստրուկն է։

Դուք չէք կարող կրակին ժողովք լինիլ որ շայրէ, շոգիին՝ որ չլայնա-նայ, կայծակին՝ որ երկնքից շինկնի, բայց կրակի, շոգիի, ելեկտրականու-թեան օրէնքները յարգելով՝ դուք նոցա հնազանդ ծառաներ կդարձնէք։ Կրակը ձեզ համար բնալուծութեան խոհարարութիւնը պիտի անէ, որը դեռևս մի տեսակ խոհարարութիւն է։ շոգին մեքենագործների առաջինը պիտի լինի, և ելեկտրականութիւնը սուրհանդակներից ամենարագը։

Մարդու բնութեան վերայ այդ իշխանութիւնը, այդ նիւթական դժերի նուաճումը, երեւկայութիւնը փոխանակող նկատողութեան հետեւանքն է։ Ահաւասիկ այն ինչ որ բացատրում է, թէ ինչպէս մեր օրերում աւելի գիւտեր են եղած քան միւս բոլոր անցած դարերում։

Այսպէս, միայն իմ մանկութիւնից ի վեր տեսած բաների վերայ խօսե-լով, ես տեսած եմ շոգինաւերի սկզբնաւորութիւնը Սէնի վերայ, ես տե-սած եմ, ինձ համար շատ ժամանակ չէ, երկաթուղիների սկզբնաւորու-թիւնը, թէպէտ և շատ հաւանական է որ ինձ լսող աղաւք երեւկայում են թէ աշխարհս ստեղծուած է երկաթուղիներով, որոնք բոլորը շինուած են Ղերսոյլ գալու համար, ես տեսած եմ ելեքտրականութիւնը երկու աշ-խարհները միացուցած և կապած ժամանակը, ես տեսած եմ մեքենական մամուլի ծնունդը, որը խոստանում է շատացնել զբքերը և նոցա արժան ծախել, և համարեա մի և նոյն ժամանակ ես տեսած եմ Պ. Դիդրոյին, որ մեքենական թուղթը յայտնագործեց, անվերջանալի թուղթ, մեքենական մամուլներին նոր նիւթ մատակարարելու համար, որին նոքա կարօտու-թիւն ունէին։

Այսպէս ամեն տեղ զիւտի հրաշքներն են երևում, որովհետեւ ամեն տեղ գործ են ածում այն մեթոդը որը նոյն իսկ դաստիարակութեան մեթոդն է, այսինքն նկատողութիւն:

Բայց եւ յաճախ լսած եմ ասելիս թէ ճշմարիտ է որ ընտրեալն ծանօթ լինելը մեծ յառաջադիմութիւններ արած է, թէ աներկբայի է որ մարդս ընտրութիւնը նուաճած է և նորան ծառայեցուցած իւր կարիքներին, բայց մի և նոյն չէ բարոյական օրէնքների վերաբերմամբ:

Նոյն իսկ բարոյական անկման մասին են խօսում և ասում են թէ, անցեալի առաքինութիւնները այժմեան մոլութիւններն են փոխարինած:

Ես յիշողութիւն ունիմ եւ մտարեբում եմ որ երբեւ տղայ էի, ասում էին արդէն, որ ես չէի արժէր իմ հօրս, և թէ իմ հայրը չէր արժէր իմ պապիս, այս պատճառով շուտով ես կասկածեցի այս համաշխարհային հետզհետեւ ապականութեան վերայ:

Ես չեմ կարծում որ մի մարդ սորանից հարիւր տարուց առաջուց մարդից քիչ արժէ, եւ կարծում եմ ընդհակառակն, որ այժմ մարդը աւելի շատ կարժէ այն պատճառով, որ աշխատութիւնը աւելի յարգուած է քան երբ և իցէ: Այսօր իւրաքանչիւրը աշխատում է և աշխատութիւնը զըլխաւոր բարոյականութիւն տուողն է: Ես կարծում եմ որ մի մարդ աւելի շատ է կարժէ, որովհետեւ բարոյական օրէնքները աւելի լաւ է հասկանում:

Անշուշտ, Յիսուս Քրիստոսի այս խօսքը աշխարհք բերելուց ի վեր, այն է «էրէքէ՛ք շէքէքէ՛ք», յառաջադիմութիւն չէ եղած, այն մտքով որ նոր բարոյական օրէնք չէ գտնուած, բայց նոյն իսկ Յիսուս Քրիստոս իւր օրէնքը նմանեցուցած է մի սերմին, որ դառնում է մի մեծ ծառ, և ճշմարիտ է ասել որ ծառը աւելի մեծ է քան թէ հազար ու թիւ հարիւր տարի առաջ:

Այսպէս, վերջին երեք դարերում, շատ իրատեցի գործ էին համարում Աֆրիկա գնալ, յափշտակել զժբաղդ սևերին և նոցա Ամերիկա տանել ստրուկ անելու համար: Մինչև անգամ կոյիներ կրկրներ, ինչպէս Բրազիլիայ, որտեղ կարծում էին որ մեծ բարիք էին անում այս խեղճ զոհերին, որովհետեւ նոցա մկրտում էին, այն ընկերութիւնները, որոնք գնում էին այս զժբաղդների ետեւից նոցա ստրուկ դարձնելու համար, երբեմն կոչուում էին Քարոզութեան Ընկերութիւններ, Այդ բանը Աւետարանի ընկերութիւնը շատ վատ հասկանալուց էր յառաջ գալիս: Այսօր մենք տեսանք մի մեծ ժողովուրդ վեր կացած այս ստրկութեան խայտառակ հաստատութիւնը ջնջելու համար: Բոլոր Եւրոպայում սրտերը Լենկոլնի համար երկիւղ էին կրում, որը փայտահարութիւնից միանցեալ նահանգների նախագահ դարձած էր, և ստորագրած չորս միլիոն մարդիկների ազատութիւնը: Արդարեւ այդ մի բարոյական յառաջադիմութիւն է:

Ես ասում էի այժմ որ ես հաւատում էի բարոյականութեան յառաջադիմութեան, որովհետեւ ինձ թուում էր որ բարոյական օրէնքը աւելի լաւ հասկացուած էր, փառք դաստիարակութեան յառաջադիմութեանը: Ես պնդում եմ այս կէտը որ քիչ նկատուած է: Արքեպիսկոպոս Կաթողիկոսը և

նոյն են բոլոր ժամանակներում և բոլոր երկիրներում: Բայց գործելու համար կրքերը մտքին են դիմում: Նա է որ նոցա կասեցնում և նոցա բաւականութիւն տալու համար միջոցներ հայթայթում: Երբ միտքը լուսաւորուած է, նա կիրքը շափաւորում է: Երբ միտքը տգէտ է, նա մեր տրկարութիւններին գերի է լինում:

Զգիտեմ ուր՝ ես կարգացի որ Պարսից տէրութեան մէջ մի հիւանդ զընաց իւր բժշկից խորհուրդ հարցնելու վերջինս նորան ասաց. «Դուք մի տեսակ քոյրեա ունիք, դուք կանաչ պտուղ էք կերած. — Այո՛, ասաց միւսը, Լաւ, ես ձեզ մի զեղատոմս կգրեմ, և նա նորան մի աշքացաւի զեղատոմս գրեց. Ի՞նչ էք անում, ասաց հիւանդը, դուք ինձ աշքացաւի զեղատոմս էք գրում, մինչդեռ ստամոքսս է ինձ տածջում. — Անմիտ ասաց բժիշկը, եթէ քո աշքերդ լաւ եղած լինէին, նոքա քեզ ցոյց տուած պիտի լինէին, որ այն պտուղները, որը դու կերել ես, կանաչ էին, ուրիմն քո աշքերդ են հիւանդ »: Մտքի մասին ևս կարելի նոյնը ասել, որը մեր հոգու աչքն է: Որքան մարդը կրթուած է, այնքան աւելի լաւ է տեսնում նա պատճառների և հեռանկարների կապակցութիւնը: Բոլոր մարդկային իմաստութիւնը այս նկատողութեան մէջն է: Ասում են որ Արիփկայում երկիրներ կան, որ տեղ սեւը միշտ պատրաստ է ծախելու իւր տունը առաջ դուրս եկողին: Նա չէ մտածում որ երեկոյեան պտուկելու կարիք պիտի ունենայ, և երեկոյեան նա վերադառնում է, լաց լինելով խնդրելու այն ինչ, որ առաւօտեան տուած էր առանց մտածելու: Նա մի մեծ տղայ է, որ չէ կարող քսան չորս ժամուայ համար հաշիւ անել:

Քիչ թէ շատ, սեւի պատմութիւնը մեր պատմութիւնն է: Բանական մարդը հաշուում է, նա ինքն իրան ասում է. «Եթէ ես մնամ երկար իմ անկողնիս մէջ, եթէ ես այսպիսով իւրաքանչիւր օր մի ժամ կորսնցնեմ, տարուայ վերջը ես կորսնցուցած պիտի լինիմ՝ երեք հարիւր վաթսուն հինգ ժամ, այսինքն երեսուն վեց օր և կէս, օրը տասը ժամ հարմարելով, տարուայ բուն մի երկոտասաներորդ մասից աւելի, և եթէ ես շարունակեմ, ես իմ կեանքիս մի երկոտասաներորդ մասը պիտի կորսնցունեմ »: Երբ մարդս երիտասարդ է, այս հաշիւը չէ անում, նա ինքն իրան ասում. «Ես այսօր ուշ վեր կըկենամ, վաղը ես ձեռք կըբերեմ կորսուած ժամանակը »: Բայց կորսուած ժամանակը երբեք ձեռք չէ ձգուում, վաղը մարդըս այն է անում ինչ որ առաջին օրը, և սովորութիւնը մեզ իւր իշխանութեան տակ է առնում և մեզ կործանում:

Նս փորձեցի ձեզ ցոյց տալ որ ամբողջապէս դաստիարակութիւնը իւրեան առարկայ անէր բնական և բարոյական օրէնքները մեծարելը, բայց այս օրէնքները մեծարելու համար պէտք է նոցա ճանաչել: Այս պատճառով է որ ձեզ ուսուցիչներ են կարգում, նոցա յանձնարարուած են ձեզ ուսուցանելու այն ամէնը, ինչ որ փորձառութիւնը և մտածողութիւնը մարդիկներին սովորեցուցած են քաղաքակրթութեան սկզբնաւորութիւնից ի վեր: Բայց բաւական չէ որ ձեզ ասեն ինչ որ եղած է, պէտք է որ դուք

մի ներգործական դեր խաղաք, պէտք է որ դուք կրկին սկսիք մի որ և իցէ կերպով ձեր հայրերի գործերը, պէտք է որ դուք անցնէք ձեր կարգին, այն ճանապարհով, որից նոքա զարհուրած են:

Ձէ կարելի գիտութիւնը տեղափոխել ձեռքից ձեռք անցնող առարկայի պէս: Այն ամէնը ինչ որ մարդիկը գտած են վեց հազար տարիից ի վեր, պէտք է որ դուք, ձեր յիշողութեան և ձեր մտքի ճիգս ըլ, նոցա խրատէք հինգ կամ վեց տարուայ միջոցում: Ահա այդ է որ այնքան բաներ կան երիտասարդութեան ժամանակ սովորելիք: Քաղաքակրթութեան հարստութիւնն է որ դաստիարակութիւնը երկարացնում է, եթէ մեր հայրերը ոչ-ինչ չգիտնային, մեր դաստիարակութիւնը կարող էր մի օրուայ մէջ վերջանալ: Ապրենին իւր որդիքը ուսումնարան ուղարկելու կարիք չունի, նոքա իւրեան պէս վայրենի պիտի լինին: Ընդհակառակը դուք կարիք ունիք ուսանելու այն, ինչ որ մեծ մամիմատիկոսները, մեծ բնաբանները, մեծ բնագետները, մարդկութեան, այն է ձեզ համար, արած են: Պէտք է որ Եւկլիդեսի, Նեւտոնի, Լեյբնիցի հետեողների գաղափարը ձեր լինի: Քաղաքակրթութիւնը իւր բոլոր գիտերով, մի անվերջ հարստութեան աղբիւր է, իւրաքանչիւրը այն տեղից կարող է ջուր առնել, բայց պէտք է որ անձամբ այն տեղ դայ: Փոխանորդի ձեռքով ոչ ոք չէ կարող ուսանիլ:

Թէ հարուստ, թէ աղքատ, դաստիարակութիւնը իւրաքանչիւրին անհրաժեշտ է: Բայց որդիքս, ձեզ համար նա աւանդութեամբ ամենաբարեբաղդ պայմաններով: Ձեր առած դաստիարակութիւնը բոլոր դաստիարակութիւններից ամենագործնականն է, այն որ ամենալաւ կերպով միտքը ճշմարտութեան ընտելացնում է*):

Ես չեմ կամենում Լիսինբերի մասին վատ խօսել: Աստուած հեռու պահէ, բայց այդ հաստատութիւններում, այն ինչ որ ամենից աւելի սովորեցնում են, դասական հնութիւնն է, այն է լեզուները, մատենագրութիւնը, պատմութիւնը: Մի այսպիսի ուսումն ինքն ըստ ինքեան շատ յարգելի է, բայց ոչ պատմութիւնը, ոչ լեզուները, ոչ մատենագրութիւնը, որոնք մարդիկների գործ են: չունին այն ստուգութիւնը, չունին այն անվրէպ ճշտութիւնը, որը ճշմարիտ գիտութիւնների բնագործութիւնն է: Մարդիկները խաբուում են, բնութիւնը չէ խաբուում երբեք:

Եւ մի և նոյն ժամանակ այն ուսումները, որ ձեզ տալիս են, նոքա են, որոնց դուք պիտի կարօտութիւն ունենաք ձեր աշխարհ մանելու ժամանակ: Ինչպէս Զանսիոնի աշակերտ, ձեզանից պահանջում են լինել մաթեմատիկոսներ, բնագետներ, բնաբաններ, նկարիչներ: Ոչինչ ձեզ համար փոխուած պիտի չլինի կեանքի մէջ:

Անկասկած այս չէ բոլորը, մալիս միմիայն մեքենագործ, վաճառական և գործատէր չէ, ամենից առաջ նա մարդ է, և բարոյական օրէնքներ կան:

(*) Իերտրան վարժարանը իրական (professinelles) ուսումնարան է:

որը իւրաքանչիւր մարդ պարտական է ճանաչել և մեծարել: Այս կողմից է որ Լիսէի զաստիարակութիւնը առաւելութիւն ունի: Եւ միշտ այն մտքին եմ գոյիս որ երիտասարդութեան համար մեծ օգուտ է կանխապէս ընտելանալ սովորելու անփոփոխ ճշմարտութիւնները, և հաստատուն օրէնքները: Այդ բանը զաստիարակեան ուղղութիւն է տալիս և բնաւորութեան հաստատութիւն: որը ոչ մի բան չէ կարող փոխարինել:

Գիտութիւնը իմանալ բաւական չէ: պէտք է գործնականապէս կատարել, և ինչպէս ծերունի Մօնտէյնը ասում էր, պէտք է նորան իւր տունը տանել և նորան հետ ամուսնանալ: որովհետեւ եթէ դուք նորան գործնականապէս չկատարէք, նա այնպէս է որպէս թէ չլինէր:

Ի՞նչ պիտի անէիք դուք, եթէ մէկը ձեզ տար Աւրստլի ուսմանց թանգարանի (murée) ցուցակը, և ասէր. «նստեցէք բակի մի անկիւնում ստուերի տակ, կարգացէք այդ, և դուք պիտի տեղականաբ ուսմանց թանգարանին»: Դուք պիտի ասէիք. «ոչ, ես մի միայն պիտի տեղեկանամ ցուցակին»: Աւսմանց թանգարանին տեղեկանալու համար, պէտք է որ ես տեսնեմ նկարները և նոցա ուսումնասիրեմ»:

Հաս լաւ: սրդիքս առ հասարակ ձեր ուսումն ևս հարեանցի է: ուսումը ձեզ աւանդում են մի գրքի մէջ, և դուք ասում էք. «ես իմ գիրքը գոց դիտեմ, ես կարող եմ պատմել մի ծայրից մի ծայր: Օրինակի համար ես գիտեմ որ տասն անգամ հարիւր հազարը, մի միլիօն է անում»: բայց եթէ մէկը ձեզ ասէր. «ի՛նչ է մի միլիօնը, ինձ ցոյց տուէք դաշտում մի միլիօն մարդու բռնած տեղը, կամ մի միլիօն ցորենի հասկերի բռնած տեղը»: դուք պիտի բոլորովին զարմանաք, ամենափոքր գաղափար չուենալով այդ բանի մասին: Միլիօնը դուք հրէք տեսած չէք:

Օգուտ քաղեցէք ձեր արձակուրդից, դուք ինքնին ձեզ տալու զաստիարակութիւնը: ոչ թէ խօսքով, այլ գործով: Դուք մի վաճառական հայր ունիք և դուք ամերակալութիւնը սովորած էք: Աղաչեցէք ձեր հօրը որ ձեզ հաւատայ թղթակցութիւնը և ամարը: ես ձեզ ասում եմ՝ որ դուք այսպիսով շատ գործեր պիտի սովորիք, որը չէիք իմանում, կամ թէ դուք պիտի մտածէք շատ բաների վերայ, որը ձեզ սովորեցուցած են: բայց ձեր մտքումը կենդանի չին:

Ձեր շուրջը կան գործարաններ, արուեստանոցներ, փոքր տնավաճառանոցներ, և մենք այս բոլորիս այդ բոլորի ամենագեղեցիկը ունինք: Այցելեցէք այդ բոլորին, զաստիարակութեան հիմն է ճշմարտութիւնը տեսնել և նորան իւրացնել:

Մի վախճաբ ամենափոքր մանրամասնութիւնների մէջ մտնելու, որ ոչինչ չլինի ձեզանից ցած և ոչինչ ձեզանից վեր: Մաթեմատիկական գիտութիւնների մէջ եղած ամենամեծ գիւտը, այն է նեւտօնը: յառաջ է եկած մի նկատողութիւնից, որը մի աղայ կարող է անել ամեն օր: Լօնտրայի ժանտախտի միջոցին, նեւտօնը զիւղ էր քաշուած: Տեսնելով մի խնձոր ընկնելու ժամանակ, նա ինքնիրենը հարց առաջարկեց, ինչու

Համար խնձորը ընկնում է և ոչ թե օդի մեջ բարձրանում։ Այս պարզ մտածմունքը նորա Համար ներկայ ժամանակի ամենամեծ գիտի սկիզբն եղաւ։

Դուք ևս կարելի է գիւտեր պիտի գտնէք։ Երբ որ նկատուին հարցուցին թե ինչպէս գտած էր նա աստղերի կարգը, պատասխանեց. «նորա մասին մտածելով»։

Այլ որ ինքներեն մտածում է, փոխանակ մի գրքով բաւականանալու, կարող է մի օր գտնել մի որ և իցէ զարմանալի գիւտ։ ով որ իրերը ինքնիրեն չէ ուսումնասիրում, և գրքերի հետ է ծանօթանում և աւելի ոչինչ։ Պէտք է որ ճշմարտութիւնը ձեր հոգու մէջը մտնէ։ Եթէ ոչ, ինչպէս որ Լորաս Մանը ասում էր, գրքերով բռնաւորուած մարդ նման է ցորենով բռնաւորուած էշին։ Յօրենը ընտիր կերակուր է բայց նորան ուտելու և մարսելու պայմանով։ Եթէ մէկը նորան վերան տանելովը բաւականանայ, ինչի՞ է նման նա — Զրազաց գնացող էշին։

Մի գործնական ուսում կայ որը ես առանձնապէս պատուիրում եմ։ Մենք մտաւորական օրէնքների մասին խօսած ենք, բարոյական օրէնքների մասին ևս խօսինք։ Դուք կ'մըտնէք ձեր ընտանիքները, բարոյական օրէնքը գործնականապէս կատարելու պատեհը բոլորովին պատրաստ է։

Ձեզ հետ յաճախ խօսած են յարձակման գնացող զինուորի զիւցազնական գործերի մասին։ այն նաւաստիի զիւցազնական գործերի մասին, որը երբ տեսնում է ալիքներով կոծուած մի նաւ, պատրաստ ժայռերի վերայ խորտակուելու, իւր կեանքը վտանգի մէջ է գնում։ ալեկոծուածներին ազատելու համար, ձեր սիրտը ծմլուած է այս պատմութեան վերայ, դուք ձեզ խոստացած էք լինել մի զիւցազն, այս շատ լաւ է։ Ապր զուք ձեր ընտանիքի մէջ պիտի լինէք, ձեզ պիտի չխօսին յարձակուելու մասին, և ոչ քաջութիւն միայնակ ծովի հետ մրցելու, բայց ձեզանից պիտի պահանջեն ձեր եղունգները չկրծել, կամ գնալ պառկել կրեկոյեան առանց վիճարանութիւնների անելու։ որովք երբեք ամբողջ ժամեր են տեսում, ի մեծ զուարճութեան օտարականների։ Սկսեցէք փոքր գործերում, զիւցազն լինելով։ Ձեզանից փոքր մի եղբայր ունիք, Սովորեցուցէք նորան ինչ որ գիտէք, օգնեցէք նորան, սիրեցէք նորան, և դուք պիտի զարմանաք բարոյական օրէնքներից զխաւար յայտնագործելով։ Երջանիկ լինելու ամեն ապահով միջոցը, ուրիշներին երջանիկ անելն է։ Երբ որ մարդ ինքն իրեն սիրում է ամեն բաներից աւելի, նա միշտ վրիպանքներ ունի, նախ նա ինքն իրեն միշտ գոհ չէ գտնուում, և ուրիշները աղմկում են մեր ցնորքն, բայց երբ մարդ ուրիշներով զրադուում է, բարիք անելու և երջանիկ լինելու միջոցները չեն պակասում երբէք։

Ահաւասիկ այն խորհուրդները որ ես ձեզ կ'ամենում եմ տալ, ես աւելացնում եմ որ, բարեբախտաբար ձեզ համար, դուք ծնուած էք աշխարհի ամենընտրեալ դարում այն մարդի համար որը պարտական է ինքն իրեն բաց անել իւր ճանապարհը։

Եթէ, փոխանակ այսօր ձեզ հետ խօսելու, հարիւր տարի առաջ այդ բանը արած լինէի, հաւանական է որ ես ձեզ ամենից աւելի պիտի յորդորէի գոհ լինել ձեր վիճակից և նորանից դուրս չգալ, Հասարակութիւնը դասերի էր բաժանուած. ազնուականը երեւիլի պաշտօնեայ էր, քաղաքացին ապրում էր մի ո՛ր և իցէ տուրքով կամ իւր փոքրիկ եկամուտով, Գիւղացին միշտ գիւղացի էր, գործաւորը՝ գործաւոր, և մեծ աշխատանքով կարող էր նա վարպետ լինել, Խոհանոցի թիւն էր այն պայմանից դուրս չգալ, որ տեղ բախտը ձեզ հաստատած էր ձեր ծնած ժամանակ:

Այսօր ուրիշ տեսակ է պատուաւոր միջոցներով, աշխատութիւնով և տնտեսութեամբ բարձրանալու, փառասիրութիւնը ոչ միայն օրինաւոր է, այլ և անհրաժեշտ: Այլ ևս չեն խօսում այսպէս. «Նս փառասէր չեմ, ես յառաջանալու չեմ՝ հետեւում, ես կամենումեմ մնալ այնտեղ ուր, բախտը ինձ դրած է», դուք ձեր ետեւ մարդիկ ունիք, որոնք ձեզ պիտի ջրեն և պիտի ջարդեն, Պէտք է յառաջանալ աշխատութեամբ, ճարտարութեամբ, բոլոր ճիգերով, որը մի մարդ կարող է անել, Նս այն աղայքների վիճակից աւելի լաւ ինչ բան կայ, որոնք, ինչպէս դուք, գիտեն որ միայն աշխատութեամբ կարող են յառաջանալ, Անկասկած կան ձեզանից շատ աւելի հարուստներ, և դուք ձեզ ասումեք, նորա առաւելութիւն ունին — Ոչ, այդ անառաւելութիւն է և, ինչպէս որ ասում է մի Ամբրիկացի. «գիտութիւնը իւր որդիքը սնուցանում է մի զրգաւով, որ ոչ մի ժամանակ արծաթեայ չէ»:

Աշխատութեան անհրաժեշտ լինելը զգալուց և կանխապէս յառաջանալուց աւելի լաւ բան չկայ, Դուք կարելի է տասը տարի է ի վեր մի պաշտօն ունիք, և ձեր վիճակը պիտի սկսուի, մինչդեռ ձեզանից աւելի, հարուստ երիտասարդներից մինը դեռ ինքնիրեն պիտի հարցնէ թէ ինչ ընթացք նա կարող բռնել:

Նս չպիտի վերջացնեմ այս ճառը, առանց շնորհակալ լինելու ձեր հայրերից և մայրերից, Նոքա հասկացած են թէ ինչ է գոտարակութիւնը, նոքա զգացած են անհրաժեշտութիւնը իւրեանց որդիներին տալու աւելի լաւ մի վիճակ, քան թէ այն որ առհասարակ տրուում է, երբ մարդ իւր անձնական ճգերով է սահմանափակուած, Նոքա ձեզ համար զոհեր արած են, և յաճախ նշանաւոր զոհեր, Այդ բանը լաւ է այդ բանը գեղեցիկ է:

Ամեն անգամ որ Աստուած մի երեխայ է ստեղծում, ինձ թուում է որ ես լուսմեմ ծննդոց զրքի այս մեծ խօսքը. «Եղիցի լոյս»: Այս մանուկը լոյսի պէտք ունի, նա ճշմարտութիւնը ճանաչելու պէտք ունի, աշխարհի մէջ իւր ճանապարհը բաց անելու պէտք ունի, բայց պէտք է որ մի հօր ձեռքը բռնէ նորանը և նորան առաջնորդէ, եթէ այս ձեռքը պակասի, մանուկը շատ անգամ կորսուում է:

Երջանիկ է հայրը, երջանիկ մայրը, որ հասկանում է այսպէս լաւ իւր պարտքը, Եթէ մէկը մեզ ասէր որ, տասն երկու ժամուայ մէջ, այս տղայքների բախտը վճռուած պիտի լինի, թէ ոմանք երջանիկ պիտի լինին:

ումանք դժբաղդի մի քանիսը առաքինի միտները մոլի իւրեանց կեանքի մնացորդում ինչպիսի ուշադրութիւն պիտի դարձնէինք մենք բոլորս դէպի այսպիսի մի վճիռ։ Յայտնի է որ տասներկու ժամը կամ տասներկու տարին գործին ոչիւն չեն անում։ Ցասներկու տարիից առաջ այս վճռուած պիտի լինի։ Նա որ իմաստուն և բարի է եղած մինչև իւր տասն հինգերորդ տարեկան հասակը, հասնական է, որ նոյնը լինի բոլոր իւր կեանքում։ Մանկութիւնը վճռողական վայրկեան է, լաւ է մի հօր և մի մօր համար այդ բանը հասկանալ և խնայելու զրկել ամեն բանից, իւր որդիքներին մի լաւ գաստիարակութիւն տալու համար։

Իսկ ինչ վերաբերում է ձեզ, իմ բարեկամներ, ես ձեզ չպիտի թողում առանց վերջին մի խորհուրդ տալու։ Անանքը բացուելու վերայ է, կամ աւելի լաւ է ասել, նա ձեզ համար արդէն սկսուած է, նոյն իսկ այժմեանից պէտք է ձեզ ընտելանալ ժամանակը լաւ գործածելու, ձեր կեանքը կանոնաւորելու։

Յիշում եմ որ կարգացի մի ամերիկական օրագրում հետեւեալ ազգաբարձութիւնը որ իմ աչքիս է զարկած, որից ես փորձել եմ օգուտ քաղել, և որից և դուք կարող էք օգտուիլ։

Երկու ոսկեայ ժամ կորսուած է, իւրաքանչիւրը վաթսու շաբաթանոցեայ վայրկեան ունենալով։ Նոցա ձեռք ձգողին վարձ չեն տալիս, որովհետեւ երբէք պիտի չգտնուին։

Եւ ի՞նչ կարող է մարդ անել մի ժամում։ Մեծ գործեր, ես այժմ ձեզ մի օրինակ մէջ կբերեմ։

Այժմ Ամերիկայում մի մարդ կայ, որ կոչւում է Ելիհու Բիւրի, Տասն հինգ տարեկան, նա հասարակ դարբին էր։ Նա անկատար գաստիարակութիւն առած էր, բայց սակայն այնքան լաւ, որքան կարող են տալ Ամերիկական ուսումնարանները, նա ուժով էր, և այնքան հանճարեղ, որքան գործունեայ։ Գարբնութեան ժամանակ նորա մէջ մի գեղեցիկ գաղափար ծնուեցաւ, այն է Լատիններէն սովորել, նա ժամանակ չունէր տանը սովորելու։ Առաւօտեան պէտք էր որ, կանուխ դարբնոցում լինէր, երեկոյան նա սաստիկ յոգնած էր։ Գիտէք որ վայրկեանը ընտրեց Լատիններէն սովորելու համար։ Բնչպէս դարբին, նա երկաթը կրակի մէջ էր դնում և պէտք էր որ երկաթը տաքանար։ Այս միջոցի ժամանակն էր որ նա Լատիններէն սովորեց։ Յետոյ նա նկատեց, որ ժամանակ ունէր ուրիշ բան սովորելու, և մի տաքուայ մէջ նա Յունարէն սովորեց, դարբնելով երկաթը երբ տաք էր, և կարգալով Հոմերոսը երբ երկաթը պաղ էր։

Ամէն բանի մէջ առաջին քայլն է որ նշանաւոր է, երբ Ելիհու Գիւրին սովորեց Լատիններէն և Յունարէն, նա ինքն իրեն ասաց, «Ամէն առաւօտ ես անդիլներէն Աստուածաշունչ եմ կարգում, ինչու համար ես չպիտի կարգամ բնագրում։ Ես երբայեցորէն կսովորեմ, ես կերթամ Արեւելք, Ասորիք, այնպէս որ Եբրայեցիներէն մօտիկ լեզուներով եմ խօսում, ես նաւաստի պիտի լինիմ ապրելու համար, և ես պիտի սովորեմ Եբրայեցիներէն և Արա-

բերէն: և ապա մօքի վերայ էր: Իրր պատահեց իւր քահանային և նորան յայտնեց իւր միտքը: քահանան նորան ասաց. « Ինչու համար դու պիտի նաւարկես: Համալսարանում Արաբերէն, Եբրայեցերէն քերականութիւններ կան: առանց քո տնիցը դուրս գալու: դու կարողես սովորել այն ամենը: Ինչ որ կկամենաս »: զարբիւր այս խորհրդին հետեց: այս բազմալեզուագէտ զարբիւր այսօր քառասուն հինգերորդ լեզուն է սովորում:

Այդ բանը, ինձ պիտի ասէք դուք: միայն օտար երկրում է տեսնուում: Ոչ, որդիքս, ես մի եզրայրակից ունիմ՝ ճեմարանում: ես կարողիմ: իւր անունը տալ առանց նորան մատնելու - այն է պ. Յաւիթանս ուսուցչապետ Փրանսական կօլեժում: և ինձ պատմած է շատ անգամ: որ նա Օոլիանի փոքր սիմեոնարիայում աշակերտ էր: և արձակուրդի ժամանակ շունհնալով ընտանիք և մի անելիք գործ: և ա սովորած էր Անգլիերէն մի բազրքով և մի գրքով: որը նա պատահամբ գտած էր: Հետեւեալ տարին նասովորեց Գերմաներէն մի և նոյն կերպով: և այսօր նա կատարելապէս գիտէ տասնհինգ կամ քսան լեզու: Ոչինչ չկայ որ մարդ չկարողանայ անել: միայն թէ գիտե՞նա՞յ օգուտ քաղել իւր ժամանակից: որը քօտ երևութիւն այդքան շուտ է անցկենում:

Վերջապէս այս է իմ եզրակացութիւնս: մտածեցէ՛ք: որ ձեզ թոյլատրուած չէ անսխալութիւն մնալ: Իւրաքանչիւր մարդ ճանապարհ ընկած մի գինւոր է: Բոլոր հարցն է գիտնալ թէ դուք պիտի բարձրանաք: թէ պիտի իջնաք: Եթէ դուք պատուաւոր անձինքնիր տնտես: աշխատասէր: հանձարեղ լինիք: յայտնի է որ դուք ձեզ պիտի բարձրացնէք պատուի և բախտի ճանապարհի վերայ: Եթէ դուք վատնէք ձեր ժամանակը: ձեր փողը: ձեր առողջութիւնը: դուք պիտի իջնաք: և քսան տարուայ մէջ մի անդունդ պիտի լինի նորա մէջ: որ միշտ բարձրացած է և միւսի մէջ: որ միշտ իջած է: Իւրաքանչիւր մարդ ծնած է բարեգործ կամ չարագործ իւր և իւր նմանների համար: պէտք է ընտրել: և ես կարիք չունիմ ձեզ ասելու: ընտրեցէ՛ք: Չեր ընտրութիւնը եղած է: Յառաջացէ՛ք ուրիմ: միշտ կուսելով: մտածեցէ՛ք նորա մասին: որ դուք երախտապարտ էք ձեր ծնողներին: ուսուցիչներին: որոնք ձեր աչքերը բացած են ճշմարտութեան համար: Երբէք մի՛ մոռանաք: որ ձեր ճշմարիտ բարեբարձրը նորա են: որոնք ձեզ դաստիարակութիւն են տուած և որոնք ձեզ ցոյց տուած են պատուի և առաքինութեան ճանապարհը:

Գ. ԱԷԺ. Զ. Դաստիարակ աշակերտ

ՅԱԿՈԲ ՊԵՐԱՐԷԱՆ:

